ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 01/6-Ճ/1194 «28» 11 2013 թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ի
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ Շ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Երևանի քաղաքապետին հասցեագրված Ձեր՝ 21.11.2013թ. հ. 211-ի 5 հարցմանը, որը Երևանի քաղաքապետարան է մուտքագրվել 25.11.2013 թվականին, հայտնում եմ հետևյալը.

Առաջին հարցի վերաբերյալ.

Երևան քաղաքի ավագանու 25.12.2012թ. հ. 561-Ն որոշմամբ սահմանված է Երևանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում վճարովի ավտոկայանատեղիների ցանկը:

20.11.2013 թվականի դրությամբ առանձնացված վճարովի ավտոկայատեղեր առկա են Երևան քաղաքի՝

1. Տերյան փողոց՝ Կորյունի փողոցից մինչև Հյուսիսային պողոտա ընկած ճանապարհահատվածում,

2. Իսահակյան փողոց՝ բացառությամբ Աբովյան փողոցից Նալբանդյան փողոցն ընկած ճանապարհահատվածի,

3. Մոսկովյան փողոց, Սարյան փողոց, Ամիրյան փողոց, Բեյրութի փողոց, Հանրապետության փողոց, Չարենցի փողոց, Սայաթ-Նովայի պողոտան և Մաշտոցի պողոտան՝ ամբողջությամբ:

4. Թումանյան փողոց՝ բացառությամբ Մաշտոցի պողոտայից Սարյան փողոցն ընկած ճանապարհահատվածի,

5. Աբովյան փողոց՝ Մոսկովյան փողոցից մինչև Պուշկինի փողոցն ընկած ճանապարհահատվածում,

6. Խորենացի փողոց՝ Մաշտոցի պողոտայից մինչև Շահումյան հրապարակն ընկած ճանապարհահատվածում,

7. Գր. Լուսավորիչ փողոց՝ Մաշտոցի պողոտայից մինչև Արգիշտիի փողոցն ընկած ճանապարհահատվածում,

8. Սախարովի հրապարակում,

9. Տիգրան Մեծի պողոտա՝ Հանրապետության հրապարակից Խանջյան փողոցն ընկած ճանապարհահատվածում:

Երկրորդ հարցի վերաբերյալ հայտնում եմ, որ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի, Երևան քաղաքի ավագանու 25.12.2012թ. հ. 563-Ն որոշման 9-րդ կետի և Երևան քաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների մատուցման գնման պայմանագիր համաձայն՝ ավտոկայատեղի տուրքի վճարման նկատմամբ հսկողությունը կարող է իրականացվել անմիջականորեն կամ էլեկտրոնային համակարգի միջոցով (նկարահանող, ձայնաազդանշանային համակարգեր և այլն)։ Ավտոկայանատեղի տուրքի վճարման նկատմամբ հսկողություն իրականացվում է ավտոկայատեղի կազմակերպչի նշանակած կամ լիազոր անձի (անձերի) (այսուհետ՝ կարգավարների), իսկ էլեկտրոնային համակարգերով իրականացվող հսկողությունը՝ շրջիկ կարգավարների կամ այլ համակարգերի միջոցով։

Ինչ վերաբերվում է տեղեկատվության երրորդ հարցին, ապա հայտնում եմ, որ Երևան քաղաքի ավագանու 25.12.2012թ. հ. 561-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ ավտոկայանատեղի կահավորման և գետնանշման աշխատանքներն իրականացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմաններին համապատասխան՝ ավտոկայատատեղի կազմակերպչի կողմից իր միջոցների հաշվին՝ ապահովելով նաև օրենքով և պայմանագրով ստանձնած բոլոր պարտավորությունների, այդ թվում՝ տեսախցիկներով վերահսկելու պարտավորությունը։

Կից ներկայացվում են՝

1. «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի պատճենը,
2. Երևան քաղաքի ավագանու 25.12.2012թ. հ. 561-Ն որոշման պատճենը,
3. Երևան քաղաքի ավագանու 25.12.2012թ. հ. 563-Ն որոշման պատճենը։

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Զ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կատ.՝ Հ. Մովսիսյան
Հեռ.՝ 514-241